



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

№ _____ « _____ » 2022

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղար
պրն. Գ. Սաֆարյանին
Հայաստանում 2022թ. կայացած
«Կենսաբանության միջազգային օլիմպիադա»
ծրագրի ղեկավար
Գայանե Ղուկասյանից

**«Կենսաբանության միջազգային օլիմպիադա» ծրագրի բովանդակային հաշվետվություն
(01.01.2022-31.12.2022)**

Հ/Հ	Համառոտ բովանդակություն	Կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները	Վերջնաժամկետը	Կատարված է
1.	Մշակված խնդիրների փորձարկում և հաստատում: Մասնակիցներին տրամադրվելիք պարագաների ձեռքբերում: Օլիմպիադայի իրականացում: Հետօլիմպիական աշխատանք:	Սարքավորումներ ի, նյութերի պարագաների ձեռքբերում, խնդիրների փորձարկում և քննարկում:	Օլիմպիադայի անցկացում:	31 դեկտեմբերի 2022թ.	1. Կնքվել են պայմանագրեր 110 անուն նյութերի, պարագաների, սարքավորումների համար: Կնքվել են պայմանագրեր տպագրական, տրանսպորտային, հյուրանոցային ծառայությունների, ինչպես նաև բացման արարողության համար նախատեսված հոլդերամի և անիմացիայի ծառայությունների համար: 2. Մշակվել է ընդհանուր առմամբ 120 խնդիր: Հանձնաժողովին ներկայացնելու համար ընտրվել է 103-ը: 3. Կենսաբանության միջազգային օլիմպիադայի միջազգային կոմիտեի կողմից ստեղծված հատուկ պորտալում տեղադրելու համար պատրաստվել են մի շարք փաստաթղթեր՝ պաշտոնական հրավեր ԿՄՕ ասոցիացիայի բոլոր անդամ պետություններին, օլիմպիադայի մասնակից

					աշակերտների համար մասնակցության և օլիմպիադայի կանոններին համաձայնության հայտարարագրեր: 4. Մասնակցության հրավերն ուղարկվել է Կենսաբանության միջազգային օլիմպիադայի ասոցիացիայի 78 անդամ պետություններին և որպես դիտորդ մասնակցել ցանկացող 11 երկրների: 5. Օլիմպիադային մասնակցությունը հաստատել է 63 անդամ պետություն և 3 դիտորդ երկիր: 6. Աջակցություն է ցուցաբերվել օտարերկրյա մասնակիցներին մուտքի արտոնագիր ստանալու հարցում: 7. Պորտուգալիայից փոստով ստացել ենք օլիմպիական գավաթը: 8. Օլիմպիադայի բացման և փակման հանդիսավոր արարողությունների համար միջազգային կոմիտեի գրասենյակից ուղարկվել է օլիմպիադայի մասնակից երկրների դրոշները: Դրոշները մաքսագերծվել են և վերցվել փոստային բաժանմունքից: Պատվիրվել են այն երկրների դրոշները, որոնք այդ ծանրոցում բացակայում էին: 9. Գնվել է ծրագրի տեսական փուլի անցկացման Classmarker ծրագիրը: 10. Մշակվել է գնահատման ծրագրային ապահովում: 11. Գնվել է Oly-exams թարգմանչական ծրագրային ապահովումը: 12. Կնքվել են պայմանագրեր Մարգահամերգային համալիրի և Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի հետ: 13. Իրականացվել է կամավորների հավաքագրումը:
--	--	--	--	--	---

				14. Օպերացիոն համակարգ է տեղադրվել ԿԳՄՍ նախարարության կողմից օլիմպիադայի համար գնված և ԵՊՀ-ին ժամանակավորապես հանձնված դյուրակիր համակարգիչների մեջ: 15. Տեղի են ունեցել հանդիպումներ կամավորների հետ, և իրականացվել է ծանոթացում օլիմպիադայի կանոնակարգին: 16. Ձեռք են բերվել օլիմպիադայի համար անհրաժեշտ բոլոր նյութերը, պարագաները և սարքավորումները: 17. Կազմվել են օլիմպիադայի բացման և փակման հանդիսավոր արարողությունների ծրագրերը: 18. Կազմվել է օլիմպիադայի բացման և փակման արարողությունների մասնակիցների ցուցակը: 19. Պատրաստվել են էլեկտրոնային հրավիրատոմսեր և ուղարկվել բացման և փակման արարողությունների մասնակիցներին: 20. Ամփոփվել է օլիմպիադայի մասնակիցների ցուցակը և հանձնվել հյուրանոցներին: Կատարվել է օլիմպիադայի մասնակիցների և կամավորների սենյակների բաշխում: 21. Պատրաստվել է օլիմպիադայի շրջանակներում համաճարակի կանխարգելման վերաբերյալ տեղեկատվական ուղեցույց և բաժանվել բոլոր մասնակիցներին: 22. Օլիմպիադայի բոլոր մասնակիցների և կամավորների համար պատրաստվել են և բաժանվել անվանաքարտեր և օլիմպիադայի ժամանակացույցը: 23. Կազմվել է օլիմպիադայի մասնակիցների ժամանումների ցուցակը և իրականացվել կամավորների կողմից մասնակիցներին դիմավորելու համակարգումը:
--	--	--	--	--

				24. Հայաստան է ժամանել օլիմպիադայի ենթախումբը (8 հոգի, 2 հոգի մասնակցել է հեռավար) և գիտական կոմիտեի հետ իրականացրել օլիմպիադայի խնդիրների ստուգում: 25. Օլիմպիադայի ժամանակ օգտագործվել է Oly-exams թարգմանչական ծրագիրը և Classmarker ծրագիրը՝ տեսական փուլի անցկացման համար: 26. Հայաստան է ժամանել Oly-exams ծրագրի երկու աշխատակից և կազմակերպել ծրագրի պատշաճ աշխատանքը: 27. Երևան քաղաքում, ԵՊՀ-ում, Մարգահամերգային համալիրում, Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում և օլիմպիադայի հյուրանոցներում տեղադրվել են օլիմպիադայի վերաբերյալ տեղեկատվական ցուցապաստառներ: 28. Մասնակիցների և կամավորների համար պատրաստվել են և հանձնվել անհրաժեշտ պարագաներով և նվերներով պայուսակներ: 29. Իրականացվել է քննության անցկացման վայրի կահավորումը՝ օլիմպիադայի պահանջներին համապատասխան: 30. Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել օլիմպիադայի բացման հանդիսավոր արարողությունը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանի, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի մասնակցությամբ: Բացման արարողության ժամանակ ցուցադրվել է Մխիթար Հերացու հոլոգրամը, ելույթ են ունեցել Հանրային ռադիոյի և հեռուստատեսության էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը, Սարգիս Բաժբեուկ
--	--	--	--	--

				Մեկիքյանը, Անի Հարոյանը և «Բարեկամություն» պարային համույթը: 31. Մարգահամերգային համալիրում տեղի է ունեցել օլիմպիադան երկու փուլով՝ փորձարարական և տեսական: Փորձարարական փուլի ժամանակ մասնակիցներին առաջադրվել է չորս փորձարարական խնդիր: Փուլը տևել է վեց ժամ: Մասնակիցները բաժանվել են չորս խմբի, և յուրաքանչյուր խումբը կատարել է առաջադրված խնդիրները հերթականությամբ: Տեսական փուլը կազմված է եղել երկու ենթափուլերից՝ յուրաքանչյուրը երեք ժամ տևողությամբ: 32. Պատրաստվել և տպագրվել են օլիմպիադայի ընթացքը լուսաբանող օրաթերթեր: 33. Կատարվել է կայքի բովանդակային համալրում: 34. ԵՊՀ-ում տեղի է ունեցել միջազգային խմբային գիտական նախագծի պաստառների ցուցադրություն: Կատարվել է խմբային նախագծի արդյունքների ամփոփում: 35. Իրականացվել է օլիմպիադայի տեսական և փորձարարական փուլերի արդյունքների ամփոփում, կազմվել է վարկանիշային աղյուսակ: 36. Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել օլիմպիադայի փակման հանդիսավոր արարողությունը և մեդալների և մրցանակների հանձնումը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի մասնակցությամբ: Փակման արարողության ժամանակ ելույթ են ունեցել «Փոքրիկ երգիչներ» երգչախումբը և
--	--	--	--	--

				ԵՊՀ մշակույթի կենտրոնի «YSU band»-ը: 37. Հայաստանը լքելուց առաջ ըստ կատարվել է անվճար քովիդ թեստավորում ըստ պահանջի: 38. Ընդհանուր առմամբ օլիմպիադային մասնակցել է 65 երկրից 237 աշակերտ և ժյուրիի 206 անդամ: Կամավորների թիվը եղել է 146: 39. Պատրաստվել և հանձնվել են օլիմպիադայի մասնակիցների մասնակցության և մրցանակների և կամավորների մասնակցության հավաստագրերը: 40. 320 դյուրակիր համակարգիչները պատրաստվել են ԿԳՄՄ-ին հանձնելու համար (համակարգիչներից հեռացվել են օլիմպիադային վերաբերող ֆայլերը և ծրագրերը): 41. Կազմակերպվել և իրագործվել են օլիմպիադայի տարեգրքի փոստային առաքումներ դեպի օլիմպիադայի մասնակից երկրներ: 42. Պատրաստվել և հրապարակվել է օլիմպիադայի մասին 50 բուպե տևողությամբ տեսաֆիլմ: 43. Կազմակերպվել և իրագործվել է օլիմպիադայի բացման և փակման հանդիսավոր արարողությունների համար միջազգային կոմիտեի գրասենյակից ուղարկված դրոշների հետվերադարձը: 44. Պատրաստվել է հաշվետվություն՝ միջազգային օլիմպիադայի կոմիտեի ժողովին ներկայացնելու համար:
2.	Տպագրություն			1. Տպագրվել են օլիմպիադայի փորձարարական փուլի համար լուսանկարներ, հավաստագրեր, ամենօրյա տեղեկատվական թերթեր, անվանաքարտեր, ժամանակացույց, տեղեկատվական ուղեցույց, տեղեկատվական ցուցապաստառներ, բաններներ, գիտական նախագծի պաստառներ,

					օլիմպիադայի տարեգիրք, նոթատետրեր: 2. Պատրաստվել և տպագրվել է «Կենսաբանության օլիմպիադաներ» գիրքը:
3.	Կառավարչական ծախսեր	Ծրագրի անձնակազմի աշխատանքային պարտականությունների լրամշակում	Գործող կազմկոմիտե լրամշակված գործառույթներ ով	31 դեկտեմբերի 2022թ.	Տրվել է աշխատավարձ:

Ծրագրի ղեկավար՝



Գայանե Ղուկասյան